ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ-01.09,2015թ համայնքի ղեկավարի կողմից կատարված

աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆՔԱՎԱՆ 2015

Հարգելի Հանքավան համայնքի բնակիչներ 2014թվականի երկրորդ և 2015թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թվականի դեկտեմբերի 13-ին համայնքի ավագանին իր 33-Ն որոշմամբ ընդունել է 2014թվականի բյուջեն, որի եկամուտները կազմել են 7897800 /յոթ միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր /դրամ, ծախսերը կազմում են 7171700 /յոթ միլիոն մեկ հարյուր յոթանասուն մեկ հազար յոթ հարյուր/ դրամ:

Հողի հարկի չափը Հանքավանի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 1050000/մեկ միլիոն հիսուն հազար/ դրամ; 2014թվականին հողի հարկը հավաքագրվել է 1022200 /մեկ միլիոն քսաներկու հազար երկու հարյուր/ դրամ, որը կազմում է տարեկան պլանի 97,35 % -ը:

Գույքի հարկի չափը Հանքավանի վարչական տարածքում գտնվող շենք, շինություններիև փոխադրամիջոցների համար կազմել է 1100000/մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ դրամ; 2014թվականին գույքի հարկը հավաքագրվել է 1039700 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 94,5 % -ը:

2014թվականիդեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր N54-Ն որոշմամբ ընդունել է 2015թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 8587500 /ութ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ, ծախսերը 8718000/ութ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար / դրամ:

Հողի հարկը կազմել է 1050000 /մեկ միլիոն հիսուն հազար/ դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 526933/հինգ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր երեսուներեք/ դրամ, որը կազմում է կիսամյակային պլանի 100,37% -ը:

Գույքային հարկերը կազմել են 1100000/մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 797056 /յոթ հարյուր ինսունյոթ հազար հիսունվեց/ դրամ, որը կազմում է կիսամյակային պլանի 145%-ը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին տրվել է 85000/ութսունհինգ հազար/ դրամի օգնություն: Հաղթանակի օրվա՝ մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում և Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան պատերազմի մասնակիցներին տրվել է 30000/երեսուն հազար/ դրամական աջակցություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հանքավան համայնքում գործում է գրադարանը , որը ունի 7200 /յոթ հազար երկու հարյուր/ կտոր գրքեր:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կազմվել է նախագծա-նախահաշվային աշխատանքներ 700000 դրամ: Վերանորոգվել է ջրամբարներ, ջրագծեր:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբեկտի նկատմամբ: Տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի իրացման մեկ թույլտվություն , որից գանձվել է համապատասխան տեղական տուրքի գումարները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Սկսվել և ընթացքի մեջ է Հանքավան գյուղի գյուղամիջյան ճանապահների ասֆալտապատման հարցը: Կազմվում է նախագծա-նախահաշվային աշխատանքները:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թվականի երկրորդ կիսամյակի և 2015թվականի առաջին կիսամյակի ընթացքում կայացել են Հանքավան համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ , որոնց արդյունքում օտարվել էգյուղնշանակության հողեր 0,07256հա, բնակավայրի հողեր 0,24559 հա գյուղնշանակության արոտավայր 1հա : Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե մուտք է եղել 1229693 դրամ: